Դսեղ համայնք
ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

1. Գործառույթը՝
1) ընդերքօգտագործման իրավունք ունեցող անձի կողմից ընդերքօգտագործման արդյունքում խախտված հողերի վերականգնմանն ուղղված (անվտանգ օգտագործման համար պիտանի վիճակի բերելու) միջոցառումների՝ ռեկուլտիվացիայի ծրագրի համաձայնեցում,
2) համայնքի ավագանու որոշման հիման վրա, ընդերքօգտագործման իրավունք ունեցող անձանց հետ հողօգտագործման պայմանագրի կնքում,
3) օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով պահանջվող հողամասի (հողամասերի) նպատակային նշանակության փոփոխման համար որոշման կայացում,
4) ընդերքօգտագործման իրավունք ձեռք բերելու նպատակով երկրաբանական ուսումնասիրության համար անհրաժեշտ՝ հողերի օգտագործման մասին որոշման կայացում:

2. Գործառույթի իրականացման օրենսդրական հիմքը՝
1) «Ընդերքի մասին» ՀՀ օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մաս,
2) ՀՀ Հողային օրենսգրքի 13-րդ հոդվածի 6-րդ մաս և 83-րդ հոդվածի 1-ին մաս,
3) «Տեղական ինքնակառավարման մասին«» ՀՀ օրենք,
4) ՀՀ կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի N1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 5-րդ և 6-րդ կետեր,
5) «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասի 6-րդ կետ:

Դրույթների անվանումը	**Պահպանված է Պահպանված**	**Թերի է Պահպանված**	**Պահպանված չէ**	**Հայտնաբեր-ված խախտումները**	**Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ**	**Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները**
1.Ընդերքօգտագործման իրավունք ունեցող անձի կողմից ընդերք-օգտագործման արդյունքում խախտված հողերի վերա-կանգնմանն ուղղված (անվտանգ և օգտագործման համար պիտանի վիճակի բերելու) միջոցառումների՝ ռեկուլտիվացիայի ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի N 750-Ն որոշմամբ սահմանված պահանջներին համապատասխան կազմված և համաձայնեցման ներկայացված ծրագրին՝ հավանություն տալու հա-	Համայնքի վարչական տարածքում սպառված պաշարներով հանքավայրեր չկան:					

մար 2-ամսյա ժամկետի պահպանում:						
2.Ընդերքօգտագործման իրավունք ունեցող անձանց հետ հողօգտա-գործման պայմանագրի կնքման նպատակով համայնքի ավագանու որոշման կայացման համար 2-ամսյա ժամկետի պահպանում:	2014-2017թթ. ընթացքում համայնքում տվյալ գործառույթներ չեն իրականացվել:					
3.Ընդերքօգտագործման իրավունք ունեցող անձանց դիմումի հիման վրա՝ համայնքի ավագանու որոշման առկայության դեպքում, համայնքի ղեկավարի կողմից հողօգտագործման պայմանագրի կնքման համար 10-օրյա ժամկետի պահպանում:	2014-2017թթ. ընթացքում համայնքում տվյալ գործառույթներ չեն իրականացվել:					
4.Ընդերքօգտագործման իրավունք ունեցող անձանց դիմումի հիման վրա՝ օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով պահանջվող հողամասի (հողա-մասերի) նպատակային նշանակության փոփոխման համար որոշման կայացման 5-օրյա ժամկետի պահպանում:	2014-2017թթ. ընթացքում համայնքում տվյալ գործառույթներ չեն իրականացվել:					
5.Ընդերքօգտագործման իրավունք ձեռք բերելու նպատակով երկրաբա-նական ուսումնասիրության համար անհրաժեշտ՝ հողերի օգտագործման մասին տեղական համայնքի որոշման կայացման համար 2-ամսյա ժամկետի պահպանում:	Համայնքում տվյալ գործառույթներ չեն իրականացվել:					